բիսպն ’ի վայր. եւ զայն տեսեալ Թուրքմանացն՝ դարձան յետս, եւ իջեալ մտին ’ի քաղաքն. եւ թալանեցին չորս տաճկի տուն, եւ զՊաղտօնին տղին, զԼեւոնին եւ զԳրիգորին, եւ զայլս բա
յաթոռն՝ ’ի կաթողիկոսարանն Տէր Կարապետ կաթողիկոսին, եւ թալանեցին զվանքն եւ զսուրբ մեռոնն եւ զամենայն սրբութիւնս»:

228. Բ. Շահ-Սուար Ա.– Որդի թագաւորին Գերմանիկոյ կոչէ զսա Ժամանակագիրն. յետ նուաճելոյ զԴաշտայինն Կիլիկիա՝ (1467), եկեալ է ’ ի վերայ Սս վերադարձեալ ’ի նոյն՝ պաշարէ զբերդն, յորում «Չագամ[257] պարոնն կայր ’ ի բերդն, եւ բերդէն, եւ շատ սպանին. եւ շատ սղարկեցին զբերդն, եւ նա պահեաց. իսկ Սսեցիքն ահռկեցան եւ տվին զբերդն, դեկտեմբերի[258] ԻԳ (23). եւ եդ Շահ-Սուար՝ պարոն ’ի Սիս զՇարամէրթն. եւ Կոստանդնուպոլսոյ երկրորդի ամին, 1469, պարոնն այն տեղակալ Շահ-Սուարի՝ ութ քրիստոնեայս կալեալ դնէ ’ իհորն, եւ ոչ թէ զբազմութիւնն, յորոց շատք փախեան ’ ի Կոպիտառա: «Եւ Շարամէնթ պարոնն Սսայ՝ արար երդում, եւ յղեաց մարդ ’ իԿոպիտառայ առ Սսցիք, եւ ասաց. թէ, բերէք 12,000 դուռուշ, որ տամ զձեր մարդիկն. եւ Սսցիք ոչ գիտէին զնորա նենգութիւնն. առին շատ ձի եւ մալ, եւ գնացին ’ իՍիս. եւ իջին ’ իբերդէն, եւ ըմբռնեցին զամենայն քրիստոնեայսն եւ եդին ’ իհորն. եւ առին զմալն եւ զձիանքն եւ շատ ըռզակ. եւ սպան երեք տաճիկ: Վասն որոյ ’ իմնացեալ իշխանացն ոմանք գնացին ’ իՏէրէնտայու բերդն՝ մօտ ’ իՇահ-Սուարն. եւ առին ’ իյմանէ հրաման, եւ եկեալ հանեցին զբանտարկեալ քրիստոնեայսն»:

– Ի նմին ամի՝ միւս եւս հարուած հասեալ է տարաբաղդիկ քաղաքին. զի Էտիլ կոչեցեալ ֆախին՝ առեալ զՖարսախն (Թուրքմանս), եւ եմուտ ’ ի Սսայ «բերդն՝ գողութեամբ, եւ թառաշեաց (կողոպտեաց), եւ շատ մալ էառ, եւ շատ անօթ սրբութեանց»:– Աղիտագոյն եւս հարուած եհաս յերկրորդում ամի, «մահտարաժամն ընդ ամենայն երկիր. եւ մեռան շատ կարգաւորք եւ

[257] Որ Չաք գրեալ էր երկբայութեամբ ’ի Տեղագրութեանս, զի այնպէս էր օրինակ յիշատակարանին: Ամօք ինչ յառաջ (1464) յիշի այլ ոմն Չաքամ պէկ՝ թագաւորութեան պատուով, այլ բռնաւորութեան ցուցիւ, ’ի կողմանս Եփրատացւոց, ուր ’ի Կարկառ բերդի կալեալ զնա Քրդաց՝ սպանին:

[258] Ի Յիշատակարանին Գ (երեք) գրեալ էր ամսաթիւն: